ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ, ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԷՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐՈՅԵԱՆԻ ՁԵԿՈՅՑԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 140-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(12 հոկտեմբերի, 2014 թ.)

Վեհափառ Տէր,

Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ գիտութեան Մեծարգոյ նախարար,

Հոգեւոր հայրեր,

Հայաստանեայց Եկեղեցու պատուարժան Բարեբարեր,

Գէորգեան հոգեւոր ճեմարանի սիրելի դասախօսներ, հիւրեր եւ սաներ.

Ողջունում ենք Ձեր ներկայութիւնը Գէորգեան ճեմարանի յարկից ներս՝ հաստատութեան հիմնադրման 140-ամեակին նուիրուած հանդիսաւոր միջոցառման առիթով:

Այս նուիրական պահին Հայաստանեայց Եկեղեցու երեկոյեան ժամերգութեան մէջ հանդիպող մաղթանքն է գալիս մեր միտքը՝ «Փա՛ռք Քեզ Աստուած, փա՛ռք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փա՛ռք Քեզ»:

Աւանդաբար Ս. Մաշտոցին վերագրուող այս աղօթքն աւելի քան տեղին է, այն լաւագոյնս արտայայտում է յոյզերն ու զգացումները, որ այս պահին պարուրել են մեր հոգին: Ակնյայտ է, որ երկար մաքառումներին յաջորդած բաղձալի նպատակի իրականացման արդիւնքում են հնչել այս տողերը, իսկ այդպիսի յեղաշրջող իրադարձութիւն Ե. դարի հայ կեանքում գրերի գիւտը կարող էր լինել, միայն այն էր ի զօրու մղելու Մաշտոցին նման տրամադրութեամբ աղօթելու:

Հայ դպրութեան առաքեալը չի փառաբանում Աստծուն որոշակի ձեռքբերման համար, նա փառք է տալիս Երկնաւորին թէ՛ ձախողութեան եւ թէ՛ յաջողութեան, թէ՛ քաղցրութեան եւ թէ՛ դառնութեան համար: Տպաւորութիւնն այնպիսին է, որ նա ամենեւին մոռացել է այն դժուարութիւնների մասին, որ նախախնամութեամբ բաժին ընկան իրեն: Եւ հիմա հակառակ այդ ամենի՝ նա ետ չի նայում՝ գնահատելու իր անցած ճամփան, նրա սիրտը լցուած է անհուն,

անանձնական ուրախութեան անմեկնելի զգացումով: Միայն մեծ յաղթանակի գիտակցումն է ի զօրու նման զգացում ծնելու. նուաճումն այնքան մեծ է, որ անցեալում մնացած բոլոր տեսակի փորձութիւններն առ ոչինչ են թւում դրա համեմատ, Տիրոջ ներկայութեան գիտակցումն է համակել նրա ողջ էութիւնը: Մաշտոցը երախտագիտութեամբ լի հայեացքը յառում է Աստծուն այն խորը գիտակցմամբ, որ չկայ այլ Աստուած՝ Նրանից բացի:

Ցիրաւի, Գէորգեան հոգեւոր ճեմարանի անցած 140 երկար ու ձիգ տարիների խորքից մենք նոյնպէս սուրբ վարդապետի նմանութեամբ փառաբանում ենք Տիրոջն ամեն ինչի համար: Հակառակ բոլոր տեսակի փորձութիւններին ու հարուածներին, որ անցած դարում բաժին ընկան այս հաստատութեանն ու նրանից ելած սերնդին՝ նա մնայուն յաղթանակ գրանցեց հայ կեանքում, դարձաւ հաւատի, ստեղծագործական պայքարի ներշնչման յաւիտենական աղբիւր եւ ոգու յենարան, որ այսօր, իբրեւ նոր ժամանակների սերմնացան, ելել է ցանքսի հայ մտքի անդաստանում:

140 երկար ու ձիգ տարի՝ ստեղծագործական մաքառումի եւ անդուլ պայքարի ուղի:

Գէորգեան ճեմարանի հիմնադրումը պատմաբանների կողմից բնութագրւում է որպէս Հայ Եկեղեցու բարեկարգութեան սկիզբ: Սա միանշանակ իրողութիւն է, բայց ողջ իրականութիւնը չէ, քանզի արժանին չի մատուցում պատմական ճշմարտութեանը: Փաստ է, որ Հայոց Եկեղեցու բարեկարգութիւնն սկսուեց Գէորգեան ճեմարանից, սակայն դրանով չէր սահմանափակւում հոգեւոր կրթարանի վերջնական նպատակը: Գէորգ Դ. իմաստուն Հայրապետն աւելի մեծ տեսիլք էր հետապնդում իր մտապատկերում. նրա համար գերակայ նպատակ էր հայ ժողովրդի ազատագրութեան հարցը: Հայրապետի համոզմամբ՝ դրան կարելի էր հասնել հոգեւոր վերածնութեան միջոցով, քանզի միայն կրթուած ժողովուրդը կարող էր պայքարել յանուն ազատ կեանքի, դարձնել այն իր համար իմաստ ու նպատակ:

Գէորգեան ճեմարանն ըստ էութեան դարձաւ այն միջավայրը, որը սնեց այս գիտակցումը հայ ժողովրդի զաւակների հոգում, նա հանդիսացաւ այն մեկնակէտը, որից սկիզբ առաւ ազգային վերածնութեան տեսիլքը՝ որպէս շարունակուող իրադարձութիւն: Պատահական չէ, որ Ի. դարասկզբի հայ գաղափարախօսների հիմնական մասը ճեմարանականներ են:

Այս նուիրական պահին պատուի եւ հպարտութեան զգացումն է համակում մեր սրտերը, երբ նայում ենք անցած 140 տարուան, երբ ժապաւէնի նման վերակենդանանում են մեր մտապատկերում՝ մի կողմից անյոյս թուացող դժնի ժամանակները, իսկ միւս կողմից՝ գաղափարի հերոսները, պայ-

ծառ հոգիներ, որոնք բանաստեղծի խօսքերով ասած՝ իրենց մահացու ուղին չխառնեցին արահետներին. նրանց անցած ճամփան մեզ սովորեցնում է ոչ միայն հաւատալ մեր տեսիլքին, այլեւ ապրել յանուն դրայ:

Վեհափառ Տէր, ազգի պատմութիւնը կերտում է նրա ոգու ինքնութիւնը հաստատող գործերի միջոցով, այդ գործերն են բնութագրում ազգի տեսակը, նրա արժէքները: Սերունդների պատասխանատուութիւնն է՝ իրենց ներկան այդ ոգուն հարազատ կերպով շարունակել, որպէսզի կենդանի մնայ անցեալի հետ կապը, որպէսզի շարունակուի պատմութիւնը: Այսօր խանդավառութեամբ եւ հպարտօրէն կարող ենք յայտարարել, որ անցեալի ոգուն հարազատ, աւանդներին հաւատարիմ ձեւով է շարունակւում Գէորգեան ճեմարանի պատմութիւնը:

Ձերդ Սրբութիւնը մեզ սովորեցնում է ոչ միայն Քրիստոսի Աւետարանը քարոզել ժողովրդին, այլեւ սիրել Ազգը, պաշտպանել Հայրենիքը, ծառայել անկախ Հայաստանի գաղափարին: Ճեմարանի տեսչութեան, մանկավարժների եւ ուսանողների անունից շնորհաւորում ենք Ձերդ Սրբութեանը՝ Ճեմարանի հիմնադրման 140-ամեակի առիթով, մեր որդիական երախտագիտութիւնն ենք յայտնում Ձեզ՝ այն հոգատարութեան եւ սիրոյ համար, որ տածում էք այս հոգեւոր կրթարանի հանդէպ:

Մեր աղօթքն է, որ Ամենակալ Աստուած երկար տարիների քաջառողջ կեանք պարգեւի Ձեզ, որպէսզի, ինչպէս բանաստեղծն է ասում, միշտ վեր բարձրանայ՝

Կառուցումն այս վեհ մտքի ու ոգու,
Կեանքը տեսնելու ընթացքն այս ուղիղ,
Կեանքը փոխելու ձգտումն այս տոկուն,
Խոհի, պայքարի այս անծայր ուղին...